ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

ՍՏԱՑՎԱԾ է 1961 թ.

ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

Ա II 23728

Թարգմանեց Ա. ԴԵԲԵՆՑ

Նկարները Ն. ՉԱՂԻՆՅԱՆԻ



ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1937

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Դժվար է պատմել այդ փոքրիկ պատմությունը,—նա այնքան հասարակ է։

Յերբ յես պատանի եյի, կիրակի որերը—գարնանը և ամառը—հավաքում եյի մեր փողոցի յերեխաներին և առավոտից տանում եյի դաշտ, անտառ։ Ինձ համար հաճելի յեր մտերիմ լինել այդ փոքրիկների հետ, վորոնք ուրախ եյին թռչունների պես։

Յերեխաներն ուրախությամբ եյին թողնում քաղաքի նեղլիկ, փոշոտ փողոցները։ Մայրերը տալիս եյին նրանց հացի կտորներ, յես էլ գնում եյի վորևե համեղ բան, մեծ շիշը լցնում եյի կվասով և ինչպես հովիվ, քայլում եյի անհոգ գառների հետևից՝ քա-

դաքի փողոցներով, դաշտերով, մինչև կանաչ անտառը, որը զուգված էր գարնանային հիանալի և փաղաքշական զարդերով։

Համարյա թե միշտ, մենք քաղաքից դուրս եյինք գալիս վաղ առավոտը, պատարագի զանգահարության ժամանակ. մեզ ուղեկցում եյին զանգերի զողանջը և փոշու ամպերը, որը բարձրանում եյին մանուկների արագաշարժ վոտքերի տեղից։

Շոգ կեսորին, խաղից հոգնելով, ընկերներս հավաքվում եյին անտառի յեզրին, հետո նախաճաշելով, ավելի փոքրերը քնում եյին կանաչ խոտերի վրա՝ ընկուզենու և փռունչենու ստվերում, իսկ տաս տարեկան չարաճճիները խմբվելով իմ շուրջը՝ խնդրում եյին վորևե բան պատմել։ Յեվ յես պատմում եյի մի վորևե բան, շատ խոսելով նույնքան հաճույքով, ինչպես նրանք եյին շատախոսում ինձ հետ...

Մեր գլխավերևը գարնանային յերկնքի կապույտ կամարն է, մեր առաջ— իմաստուն լուռության մեջ խորասուզված փարթամ անտառը՝ իր բազմապիսի ծառերով. սուրում է քամին, տանում է իր հետ մեղմ շշունջները, տատանվում են բուրումնալից անտառի բատ-



վերները և նորից բարեբեր լուսությունը վա-
ղաքշում է հոգիդ։

Ճերմակ ամպերը դանդաղ լողում են
յերկնի կապույտում. արևով ջերմացած
յերկրից յերկինքը թվում է սառը, և տա-
բորինակ է տեսնել, վոր ամպերը հալվում
են նրա մեջ։

Մի անգամ, յերբ յերեխաների խմբի
հետ յես քաղաքից դաշտ եյի գնում, մեր
դեմ հանկարծ հայտնվեց բոլորիս անծանոթ
մի հրեա տղա, վոտաբոբիկ, պատռտված
վերնաշապկով, սև հոնքերով, նրբակազմ ու
գանգրահեր, ինչպես գառնուկը։

Նա հուզված եր ինչ վոր բանից, և նը-
կատելի յեր՝ քիչ առաջ լաց եր յեղել. նրա
անփայլ—սև աչքերի կոպերն ուռել ու կար-
մրել եյին և խիստ աչքի եյին ընկնում կապ-
տելու աստիճան դալկացած սովահար դեմ-
քի վրա։

Հանդիպելով մանուկների խմբին, նա կանգ
առավ ճանապարհին, վոտքերը խրելով առա-
վոտյան սառը փոշու մեջ, նրա գեղեցիկ, մթին
շրթունքներով բերանը վախից կիսաբաց յե-
ղավ,—իսկ հետևյալ վայրկյանին նա մի
թեթև վոստյունով թռավ մայթի վրա։

—Բոնիր դրան,—գոչեցին յերեխաներն ուրախ ու միահամուռ,— Ջհուդիկ է։ Բռնիր Ջհուդիկին։

Յեռ սպասում էյի, վոր տղան կփախչի։ Նրա նիհարիկ, խոշոր աչքերով դեմքը սարսափ եր արտահայտում, շուրթերը դողում էյին, նա կանգնած եր ծաղը ու ծանակի աղմուկի մեջ և տարորինակ կերպով ձրգվում—յերկարում եր, ասես հասակ եր առնում, սեղմված ցանկապատին և ձեռքերը թագցրած հետեվը։

Բայց նա հանկարծ, միանգամայն հանդիստ, պարզ ու հասկանալի ասաց.

—Ուզում եք ֆոկուսներ ցույց տամ ձեզ։

Այդ առաջարկությունը յես հասկացա վորպես ինքնապաշտպանության միջոց, իսկ յերեխաներին նա անմիջապես հետաքրքրեց և յետ մղեց տղայից։ Միայն ավելի հասակավորները և ավելի կոպիտները փոքրիկ հրեային նայում էյին անվստահ և կասկածանքով. մեր փողոցը թշնամաբար եր տրամադրված մյուս փողոցների յերեխաների նկատմամբ, մերոնք հաստատ համոզված էյին, վոր ուրիշ փողոցների յերեխաների համեմատությամբ իրենք ինչ-վոր առավելու-

թյուններ ունեն և չեյին սիրում ուրիշ յերեխաներին, չեյին կարողանում նկատել նրանց առավելությունները։

Փոքրահասակներն այդ առաջարկին վերաբերվեցին ավելի պարզ։

—Ցո՛ւյց տուր, —կանչեցին նրանք։

Գեղեցիկ, նրբակազմ տղան հեռացավ ցանկապատից, ճկեց իր նիհարիկ մարմինը դեպի յետ, ձեռքերը կպցրեց հողին և հանկարծակի վոտքերը վեր բարձրացնելով՝ կանգնեց ձեռքերի վրա և բացականչեց.

—Հոպ։

Յեվ պտույտներ եր գործում հրդեհվածի նման, թեթևությամբ ու ճարպկորեն խաղացնելով իր մարմինը։

Նրա վերնաշապկի ու հին վարտիքի ճեղքերից յերևում եր նիհար մարմնի գորշավուն մաշկը. սուր անկյուններով դուրս եյին ցցվել թիակները, ծնկների ու արմունկների վոսկորները, իսկ անրակներն ասես սանձի բերանից լինեյին։

Թվում եր, թե ահա, յերբ նա մի անգամ ել կորանա, այդ բարակիկ վոսկորները ճըթճըթոցով կփշրվեն։

Նա չարչարվեց մինչև քրտնելը, մեջքի



քրտինքից թրջվեց նրա վերնաշապիկը. կատարելով վորևե վարժություն, նա շինծու, մեռած ժպիտով նայում եր յերեխաների դեմքին, և անհաճելի յեր դիտել նրա անփայլ աչքերը, վորոնք ասես լայնացել եյին ցավից. նրանք տարորինակ կերպով դողում եյին և նրանց հայացքում շատ բան կար վո՛չ—մանկական լարվածություն։ Յերեխաները քաջալերում եյին նրան բացականչությունների աղմուկով, շատերն արդեն ընդորինակում եյին նրան, թավալելով փոշու մեջ, վայր ընկնելով, վեր թռչելով անփորձ վարժությունների ցավից, ձախողումից, հաջողություններից և նախանձից։

Բայց այդ ուրախ բոպեներն անմիջապես չքացան, յերբ տղան, դադարեցնելով իր ճարպիկ վարժությունները, նայեց յերեխաներին փորձված արտիստի բարեհաճ ժպիտով և մեկնելով բարակիկ ձեռքը, ասաց.

—Այժմ տվեք ինձ վորևե բան։

Բոլորը լռեցին, ինչ-վոր մեկը հարցրեց.

—Փող։

—Այո, — պատասխանեց տղան։

—Մի սրան տես։

—Փողով մենք ինքներս էլ կկարողանայինք...

Նրա խնդիրը փոքրիկ հասարակության մեջ թշնամական և արհամարհող վերաբերմունք առաջացրեց դեպի արտիստը. յերեխաները նրան ծաղրելով ու հայհոյելով գնացին դեպի դաշտ։ Ի հարկե, նրանցից վոչ վոքի մոտ դրամ չկար, իսկ ինձ մոտ կար միայն յոթ կոպեկ։ Յես յերկու փոքրիկ դրամ դրեցի նրա փոշոտ ափի մեջ, տղան մատներով իրար տվեց այն, և ուրախ ժպտալով ասաց.

—Շնորհակալ եմ...

Նա հեռացավ ինձնից և յես տեսա, վոր նրա վերնաշապկի թիկունքն ամբողջովին ծածկված է մուգ բծերով և կպել է թիակոսկրներին։

—Սպասիր, այդ ինչ է։

Նա կանգ առավ, յետ դարձավ, ուշադիր նայեց ինձ և նույնպիսի ուրախ ժպիտով պարզ ասաց.

—Սա, թիկունքիս վրայինը։ Այդ մենք խեղկատականոցում ենք վայր ընկել մարզաձողերից. հայրս դեռ պառկած է, իսկ յես արդեն առողջ եմ...

Յեռ բարձրացրի նրա վերնաշապիկը. թիկունքի մաշկի վրա, ձախ ուսն ի վեր դեպ կողքը—տարածված եր մուգ ու լայն մի քերծվածք. նա չորացել եր, հասատ կեղև բռնել, բայց վարժությունների ժամանակ կեղևը նորից պատռվել եր մի քանի տեղ և այժմ պատռվածքներից ծորում եր կարմիր արյունը։

Հիմա էլ չի ցավում,—ասաց նա ժպտալով,—չի ցավում, միայն քոր է գալիս։

Յեվ արիաբար, ինչպես վայել է հերոսին, նայելով ինձ, նա շարունակեց լուրջ, տարիքավոր մարդու ձայնով.

—Կարծում եք, թե այս յես ի՞նձ համար աշխատեցի։ Ազնիվ խոսք՝ վո՞չ։ Հայրս... Մեզ մոտ վոչ մի պատառ հաց չկա։ Իսկ հայրս այնպես է ջախջախվել։ Գիտե՞ք, հարկավոր է լինում աշխատել։ Իսկ այստեղ էլ—դե՞ հրեաներ ենք մենք և բոլորը ծիծաղում են մեզ վրա... Յտեսություն։

Նա խոսում եր ժպիտով, ուրախ և աշխույժ։

Իր գանգրահեր գլխի խոնարհումով հրաժեշտ տալով ինձ, նա չափազանց արագ անցավ տների մոտով, վորոնք իրենց ապակե

աչքերով նրան եյին նայում անվրդով և անկենդան։

Այս պատմությունն այնքան աննշան և հասարակ է,— ճշմարիտ չե՞ արդյոք։

Բայց իմ կյանքի ընթացքում, կյանքիս ծանր օրերին յես շատ անգամ եմ յերախտագիտությամբ հիշել այն փոքրիկ տղայի արիությունը...

Ա II 23728

Խմբագիր՝ Գ. Ղազարյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրիչ՝ ս. Արզումանյան



Գլավլիտի լիազոր Կ–4567 Հրատ. 4108
Պատվեր 780, Տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

9683

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003266

382

А II 23728

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

084.

Просм.

М. ГОРЬКИЙ

ДЕТИ

Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.

Просм. 1940 г.